

ԲԱՆԱՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԳՐԱՎՈՐԻ «ՄԻՐԱԿԱՐԿԱԶ»-Ի ԷԶԵՐՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան

Հռոմեացիները քննարկվում է 1830 թվականին Կալկաթայում տպագրված «Միրակարկազ» երգարանը բանավոր մշակույթից գրավորի փոխահեռացումն ու գործընթացի մեջ: Գրքի կազմողը հայերեն, հայատառ պարսկերեն, հնդկերեն ժողովրդական երգերը մեկտեղել է հայ լսարան ունեցող մեկ երգարանում, ինչը նաև վկայում է Կալկաթայում տիրող մշակութային բազմազանության մասին: Արժևորելով երգարանը կազմողի ունեցած միջնորդական դերակատարությունը բանավոր ժողովրդական մշակույթը գրավորի փոխարկելու գործում՝ հարց է առաջանում երգարանում հավաքված բանահյուսական ստեղծագործություններում կազմողի ունեցած միջամտության աստիճանի վերաբերյալ: Ունենալով ժողովրդական ակունք՝ երգարանը կազմողի կողմից մշակման ենթարկված գրական նյութ է, որը հրամցվում է այն ստեղծող ժողովրդին և այստեղ քննարկվում է այդ շրջանառության համատեքստում: «Միրակարկազ»-ը աշխարհիկ գրականության նմուշ է, և հոդվածում այն դիտարկվում է ժամանակի տպագրական ուղղությունների և մոտեցումների փոփոխության համատեքստում:

Բանալի բառեր – «Միրակարկազ», Կալկաթա, երգարան, բանահյուսական նյութ, հոգևոր երգ, հայերեն, պարսկերեն, հնդկերեն

Ներածություն

Բանավոր գրական ժառանգությունը, որ ժողովրդական մշակույթի մի ենթաճյուղ է, գրավորի փոխակերպման փուլում ենթարկվում է մի շարք փոփոխությունների, որոնք ուսումնասիրության կարիք ունեն: Ընդհանրապես, բա-

* **Հասմիկ Կիրակոսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Асмик Киракосян – кандидат филологических наук, старший научный сотрудник Научно-исследовательского института древних рукописей – Матенадарана имени Месропа Маштоца Института востоковедения РАН РА

Hasmik Kirakosyan – PhD in Philology, Senior Researcher at the Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts - Matenadaran, Institute of Oriental Studies of the NAS of the RA

Էլ. փոստ՝ hasmikkirakosian@gmail.com <https://orcid.org/0009-0003-1457-1293>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 25.09.2024

Գրախոսվել է՝ 05.03.2025

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

նավոր գրական մշակույթի ստեղծման և այն գրավորի վերածման գործընթացին մասնակցողներն են՝ ժողովուրդը, որը ստեղծում է, պահում է հիշողությամբ և բանավոր փոխանցում է (ընդ որում, այստեղ գործ ունենք ասացողների մեծ խմբի հետ, որոնք նույն երգը կարող ենք փոխանցել տարբեր կերպ և տարբերակներով) գրական նյութը, անձը, որը հավաքում, կանոնակացնում և տպագրում է այդ բանավոր ժառանգությունը և, իհարկե, լսարանը, որին ուղղված է արդեն գրավորի փոխարկված նյութը: Այս գործընթացում անշրջելի փոփոխությունների կարող է ենթարկվել տվյալ ժողովրդական, բանավոր նյութը, որի արդյունքում հեղինակի նույնականացման հարց է առաջանում՝ ժողովուրդ, թե՞ բանահավաք, կազմող: Իհարկե, հարցին պատասխանելիս էական են նաև վերջինիներիս նպատակը և լսարանը, որի մասին տեղեկությունները թույլ են տալիս տարբերակել, թե որչափ է նրանց միջամտությունը բանավոր տեքստին այն գրավոր դարձնելու գործընթացում: Արդյո՞ք տեղի է ունեցել «ժողովրդականից կամ հասարակից» անցումը «ընտրյալի» մշակման ենթարկվելով: Այս հարցերին պատասխանելու համար ուսումնասիրության նյութ ենք դարձել 1830 թվականին Կալկաթայում լույս տեսած «Սիրակարկաջ» երգարանը: Գրքի տիտղոսաթերթին կարդում ենք. «Սիրակարկաջ, որ է հանդիսարան Հայերեն, Պարսերեն, և Հնդստանցերեն երգոց: Հաւաքեալ աշխատասիրութեամբ Ստեփաննոսի Ջնթումեան Աւետեանց: Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Եփրեմայ Հայոց Կաթողիկոսի»: Այն բովանդակում է հայերեն, պարսկերեն, հնդկերեն գրված հարյուր վաթսուներեք բանաստեղծություն՝ ինչպես ժամանակի մի շարք հայ հեղինակների գրաբար ստեղծագործություններ, նույնպես և Նոր Ջուղայի բարբառով ժողովրդական սիրերգեր, կենցաղային ու երգիծական տաղեր, ջանգյուլումներ: Այս բանաստեղծություններից հայերեն են յոթանասունը, իսկ մնացած իննսուներեքը պարսկերեն և հնդկերեն հայատառ ստեղծագործություններ են: Այս երգարանում է տպագրվել Մեսրոպ Թադիադյանի առաջին տպագիր «Մեսրոպեան աշնան առաւոտ» բանաստեղծությունը¹, որը, ըստ ամենայնի, նաև երգվել է: Տաղարանի էջ 71-ի «Երգ բիւրիւլին» բանաստեղծությունը աքրոստիկոս է, որի երկտողերի սկզբնատառերը հեգում են «Յովհաննէս», իսկ էջ 75-ի «Յեռեալ ակամբ»-ի քառատողերի սկզբնատառերը՝ «Յաբրահամէ»: Ըստ Ռ. Պ. Նանումյանի՝ ժողովածուի մեջ գետեղված է նաև Բայրոնի բանաստեղծություններից մեկի հայերեն թարգմանությունը՝ «Սիրո ծնունդ» վերնագրով (էջ 30)²: «Սիրակարկաջ»-ի ձեռագրի մասին ևս տեղեկություններ կան: 1824 թվականին Արամ Երեմյանը Նոր Ջուղայում հայտնաբերել է «Սիրակարկաջի» ձեռագիր օրինակը և այդ օրինակի հիման վրա (տեղյակ չլինելով գրքի 1830 թվա-

¹ Դավթյան, 1967, LII:

² Նանումյան, 1989, 34-35: Մինչդեռ Յակոբ Տեր Յակոբեանն անդրադառնալով «Սիրակարկաջ»-ի բանաստեղծություններին դրանք համարում է «տափակ եւ գեղարվեստական որևէ արժեք չներկայացնող», Իրազեկ, 1986: 308-310:

կանի տպագրության մասին) 1965 թվականին «Բազմավեպ»-ում տպագրել դրա նկարագրությանը և քննությանը նվիրված հոդված: Այստեղ Երեմյանը քննարկել է նաև «Սիրակարկաջ»-ի հայատառ պարսկերեն և հնդկերեն բանաստեղծությունները և բարձր գնահատել հնդկահայ մտավորականների ջանքերը՝ գրելու օտար այդ բանաստեղծությունները հայերեն այբուբենով՝ որպես «իրար հետ շփվելու ցանկության և փոխադարձ խորը ճանաչելու միջոցներ»³: Հայկ Դավթյանը «Սովետական գրականություն» ամսագրի 1967 թվականի № 1-ում (էջ 140-141)՝ «Մի հին հազվագյուտ երգարան» վերտառությամբ հոդվածում, ընդհանուր տեղեկություններ է տվել հայերեն տաղերի վերաբերյալ:

Երգարանը հայ բանավոր մշակույթի յուրօրինակ նմուշ է՝ հայ-հնդկա-իրանական մշակութային ներկայությամբ: Այն ի ցույց է դնում նաև 19-րդ դարի սկզբում Կալկաթայում հայ տպագրության միտումները՝ հոգևորից աշխարհիկի, բանավորից գրավորի անցման առումներով:

1. Երգարանի հեղինակն ու նախաբանը

Երգարանը կազմել է Ստեփաննոս Ջնթումեան Աւետեանցը: Նա Ջնթում Աւետեանի կրտսեր որդին էր: Ջնթումեանների ընտանիքը Նոր Զուղայից տեղափոխվել է Բենգալ 18-րդ դարի սկզբին: Այս ընտանիքի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Աղա Խաչիկ Առաքելը (մահացել է 1790 թ. հուլիսի 25-ին), բենգալցի հայ նշանավոր վաճառական էր, որը գերազանց հարաբերություններ ուներ անգլիացիների հետ և մեծ բարեգործական աշխատանք է կատարել Կալկաթայի հայկական համայնքի համար⁴: Աղա Խաչիկ Առաքելը յոթ երեխա ուներ, որոնցից մեկը Աւետ Ջնթումեանն էր: Նա Կալկաթայի մտավորական-գործիչներից էր, որը 1811 թվականին հիմնեց տպարան, իսկ 1824 թ. այդ հրատարակչատունը հանձնեց Կալկաթայի բարեգործական ճեմարանին, որը գործեց մինչև 1883 թվականը⁵: «Սիրակարկաջ» երգարանի կազմողը՝ Ստեփաննոս Ջնթումեանը, Աւետ Ջնթումեանի որդին էր⁶: Պետք է նշել, որ Մովսես Մեթը ենթադրում է, որ «Ջնթում» ազգանունը կապ ունի ֆրանսերեն *gentilhomme* («պարոն», «ազնվական») բառի հետ, բայց ազգան-

³ Երեմյան, 1965: 223:

⁴ Մովսես Մեթը երկու գլուխ է նվիրել Ջնթումեան ընտանիքի պատմությանը, տե՛ս Seth, 1992: 448-469:

⁵ Տե՛ս Seth, 1992: 602. **Իրազեկը** նշում է, որը տպարանը գործել է մինչև 1820 թվականը, տե՛ս 1986: 173: Նման վկայությունների պատճառը թերևս այն է, որ Աւետ Ջնթումեանի ղեկավարությամբ տպարանը գործել է մինչև 1820 թվականը, երբ Աւետը այլևս ընդունակ չի եղել ղեկավարելու տպարանը, և նրա որդիներն էլ հմտություն չեն ունեցել շարունակելու հոր գործը, այն հանձնել է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանին, որի հովանու ներքո տպարանը շարունակել է գործել, տե՛ս նույն տեղը: 217: 1811-1820 թթ. «Աւետ Ջնթումեան» տպարանում հրատարակված գրքերի ցանկը տե՛ս **Իրազեկ**, 1986: 172-218, **Թեղոյիկ**, 1912: 174:

⁶ Տե՛ս **Իրազեկ**, 1986: 307:

վանադրման ծագումն իրեն ևս անհայտ է⁷: Հաջորդ աղբյուրը, որտեղ հիշատակվում են Ջնթլում Աւետեանը, Գեւորգ Աւետեանը և Աւետ Ջնթլումեանը՝ որպես թարգմանիչներ, Պողոս Պետրոս Լազարովիչի «Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի» գիրքն է⁸: Թադէոս Աւետումը կամ Թադէոս Խաչիկ Աւետումեանը՝ «Արամայիս» պատմական վեպի (հրատարակված Կալկաթայի «Արարատեան տպարանում», 1846 թվականին) հեղինակը նույնպես Ջնթլումեանների սերունդներից էր:

19-րդ դարի սկզբից Կալկաթա էին ներթափանցել եվրոպական լուսավորության, «նոր բանաստեղծության» ժամանակի առաջադիմական ուղղությունները⁹: Այս միջավայրում էր, որ հայ գրքի տպագրության մեջ նշանակալի տեղաշարժ նկատվեց աշխարհիկ գրքերի տպագրման¹⁰, բանավոր մշակութից գրավորի անցման առումներով: «Միրակարկաջ»-ը Լուսավորչականության համատեքստում դիտարկվող աշխարհիկ բանաստեղծական ժողովածու է, որտեղ կանոնակարգված են և գրավորի են փոխադրված ժողովրդի կողմից երգվող բանաստեղծությունները: Իրազեկը համարում է, որ այս երգարանը

⁷ Տե՛ս **Seth**, 1992: fn., p. 467:

⁸ Տե՛ս **Պ. Պ. Լազարովիչ**, 1832: 28:

⁹ Ռ. Պ. Նանումյանը հարցը քննարկում է 1822 թվականին Կալկաթայում տպվող «Շտեմարան» շաբաթաթերթի էջերում տեղ գտած ազատախոհ տրամադրությունների, քնարական բանաստեղծությունների օրինակներով. «1810-ական թվականների վերջերին հնդկահայ մտավորականների մեջ ցանկություն է առաջանում կազմակերպելու ազգային ուսումնական բարձրագույն հաստատություն, կրթական-լուսավորական գործունեություն ծավալող ընկերություններ: 1817 թ. հասարակական գործիչ Մ. Սմբատյանը, իր հրատարակած «Հրավիրակ» գրքույկում ներկայացնելով հայ ժողովրդի անցյալի համառոտ պատմությունը, անդրադառնում է ներկա տխուր վիճակին, կոչ անում արթնանալ «մահահրավեր քնից», հիշել անցյալի փառքը: Նա կոչ է անում հնդկահայ հարուստներին ստեղծել ընդհանուր դրամարկդ, դպրոցների և տպարանի կազմակերպման համար հրատարակել թերթ, գրքեր: Այդ ուղիով 20-30 տարվա մեջ հայ ազգը կրկին ձեռք կբերի իր «լուսավայությունը», կմտնի այսօրվա քաղաքակիրթ ժողովուրդների շարքը» (**Ռ. Պ. Նանումյան**, 1989: 29): Ընդհանրապես, հայ համայնքներին բնորոշ էր ինքնակառավարման և ինքնակազմակերպման մեխանիզմների ստեղծումը համայնքի ներսում, ինչը վերաբերում է նաև Կալկաթայի կամ Մադրասի համայնքներին: Դրա շրջանակում ստեղծում էին ֆինանսական միջոցներ հավաքելու եղանակներ, տպագրում կանոնադրություններ և այլն (տե՛ս **Aslanean**, 2023: 92): Այստեղ տեղին է մեջբերել Հարություն Շմավոնյանի գործունեության մասին մի հիշատակություն Թադէոս Խաչիկ Աւետումեանցի «Արամայիս» պատմական վեպում. «Պարականոն սովորութիւնքն պատմեալ զքահանայէս, երևին ընկալեալ գոլ ի Դարվիշաց աստի: Ասի զամանէ ոչ ներել եկաց կարօտաւորաց շրջիլ առ դուրս վասն հաւաքելոյ գտուրս, այլ յորդորել զնոսա յաշխատութիւն. և ի միում նուաղի կերտել տունեալ զսափոր. առաքել ի տունս մեծատանց, որ որն հաւաքել զառատտուրս վասն կարօտաւորին: Ամենաբարի օրինակ ընդհանուր գործածութեան» (էջ 119): Իհարկէ, հեղինակը Շմավոնյանի գործունեությունը համարում է տարօրինակ և պարսիկ դերվիշների ազդեցության հետևանք, որոնց մոտ Շմավոնյանը ճգնել էր յոթ տարի (տե՛ս **Կիրակոսյան**, 2021: 200-201): Իսկ Եվրոպայից շարժվող լուսավորչական շարժումը նոր միտումներ էր տալիս համայնքների մշակութային կյանքին:

¹⁰ 1512-1800 թվականների կտրվածքով կրոնական և աշխարհիկ գրքերի քանակային տարբերությունը, ըստ Սեպուհ Ասլանեանի ներկայացրած աղյուսակի, 70%/10% հարաբերակցությամբ է (տե՛ս **Aslanean**, 2023: 260):

տպագրվել է Եպիսկոպոսական Ճեմարանի տպարանում և բացատրում է, որ տիտղոսաթերթին հատուկ նշված չէ տպարանի անունը, քանի որ աշխարհիկ բովանդակությամբ գիրքը տպագրվել է միսիոներական նպատակներ ունեցող Ճեմարանի տպարանում¹¹: Մյուս կողմից, աշխարհիկ գիրքը ընդունելի էր կրոնական գրաքննության տեսակետից, և Ճեմարանը այն տպագրելուց չի խուսափել: Այս հանգամանքը առնչվում է նաև Անգլիական Եպիսկոպոսական Ճեմարանում Մեսրոպ Թադիադյանի գրական գործունեության և Կալկաթայում ստեղծված հոգևոր և աշխարհիկ իրականությունների շփման եզրերի բացահայտմանը:

Երգարանն ունի նախաբան, որտեղ Ստեփաննոս Ջնթումեանը գրում է. «Նշան ազգի որ դէպ ի լոյս և ի քաղաքականութիւն գնայ է վայելչութիւն յամենայն ի գնացս և ի բանս: Եւ եթէ վայելչութիւն և ստակութիւն վայելիցէ առանձինն անձանց, ապա որքան առաւել և միաբանելոցն ի կոչունս խրախճանաց: Ապաքէն տեսանելով իմ ի բազմաց հետէ զի յարգոյ մերագունք տեղոյս առ ի չգոյէ կանոնաւոր երգարանաց երբեմն այս և երբեմն այն գրչաւ շղեալ անկատարովքն վարէին, յոժարեցայ ի մի հաւաքել զներդաշնակաւորս մեր ազգի և այլազգի ցցուց, զորս և համեղաճաշակս քմաց վարկայ, և գեղեցկաձայնս հագագայ նուագայ մերոց, զոր և տպագրութեամբ ի լոյս ընծայեցի: Զի որ յառաջն ՚ի միում սեղանի զբազմութիւն տաղարանից գործածէին զուրոյն անկատարս յինքեանս, այժմ գայս մի միայն ՚ի կիրառեալ յամենայնի զվայելչութիւն ցուցանիցեմ, մանաւանդ զընկերակցութիւնս անդ ազգացն օտարոտեաց: Ի վախճան յուսամ զի ընթերցողքն սիրով ներողամիտ լիցին սղալանաց սպրդելոց ի սա, զորս թէ ես և թէ պարոն Յովաննէս Սարգսեանց ըստ կարևորագունին զգուշացաք որոշել, և այսպէս հռչակապէս խոստովանիմ զշնորհակալութիւն իմ վասն օգնականութեանն զոր ընկալայ ի վերոյիշեալ պարոնէ յընթացս այսր առաջին գրաւորական աշխատանաց իմոց: Ս. Ջ. Աւետեան»:

Ստեփաննոս Ջնթումեանը կատարել է «միջնորդի» դերը՝ բանավոր մշակույթը գրավորի վերածելու առումով: Ինչպէս ինքն է նշում, լուսավորության ձգտող ժողովուրդը պետք է ունենա կանոնիկացված ուրախության երգեր: Բանավոր կամ «հասարակ» մշակույթը համարել է «ստորադաս» կամ «ոչ լուսավորյալ», գերադասել է գրավոր, «մշակված» մշակույթը: Ժողովրդական բանավոր մշակույթը գրքում գտման է ենթարկվել, ստվերվել են հասարակ հայ մարդու գաղափարները, հավատալիքները, հույզերը, և գիրքը իրականում ներկայանում է որպէս միջնորդավորված ժողովրդական գրականության նմուշ: Այս գրականությունը, որը բնորոշվում է նաև «գրոսանքային, խրախճանքի», մանրավաճառների առևտրի առարկան էր, իսկ գնորդները՝ գյուղացիները, արհեստավորները, հասարակ ժողովուրդը: Հենց այս համա-

¹¹ Տե՛ս Իրազեկ, 1986: 307:

տեքստում 1846 թվականին Կալկաթայի «Արարատեան տպարան»-ում վերահրատարակվում է «Միրակարկաջը»՝ «Նուագարան զբօսանաց» վերնագրով: Ընդ որում, կազմողը, անունը անհայտ է, նշում է, որ սա «Միրակարկաջ»-ի արձագանքն է, քանի որ այն շատ սիրված էր, սակայն քիչ քանակությամբ էր տպագրվել: «Նուագարան»-ում ընդգրկված բանաստեղծությունները մոտավորապես նույնական են «Միրակարկաջ»-ում տպագրված բանաստեղծություններին, սակայն մեկ կարևոր տարբերությամբ՝ պարսկերեն և հնդկերեն երգերը հանված են, իսկ նրանց փոխարեն ավելացվել են ջուղայեցի աշուղների մի քանի բանաստեղծություններ¹²:

Առանձին պետք է խոսել նաև «Միրակարկաջ»-ի, «Նուագարան զբօսանաց»-ի տարածման և կիրառման ձևերի մասին, քանի որ դրանք «լուսավորություն և առաջադիմություն» պետք է տարածեին անգրագետ, հասարակ ժողովրդի մեջ: Դրանք ընտանեկան, ընկերական խնջույքներում ընթերցվում կամ երգվում էին մեկի կողմից, որը գրագետ ասացող էր, և այստեղ ականատես ենք լինում «ժողովրդի ստեղծած մշակույթը» փոխակերպված ձևով նրանց իսկ պարտադրելու երևույթին: Հայ հասարակ քաղաքաբնակ կամ գյուղաբնակ մարդը պարտադրված ստանում էր իր ծոցում ստեղծված կամ իր հիշողությամբ փոխանցված մշակույթի գտված տարբերակը և հայտնվում «լուսավորության» շրջածիրի մեջ: Թերևս, այստեղ հարցադրումը մնում է դեռևս քննության ենթակա՝ արդյո՞ք սա «լուսավորության» տարածում էր, թե՞ «ժողովրդական մշակույթի» գտում: Որքանո՞վ է արդեն գրավոր դարձած գրականությունը արտացոլում ժողովրդականը, հատկապես հաշվի առնելով հանգամանքը, որ թե՛ հայերեն և թե՛ պարսկերեն բանաստեղծությունների շարքում ընդգրկված են հեղինակային ստեղծագործություններ, դասական գրականության նմուշներ: Կազմողը այս հնարքը օգտագործել է ժողովրդի մեջ ավելի շատ տարածելու հենց այս ստեղծագործությունները, խուսափելու պարզ և հասարակ բանահյուսական ոճից:

«Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի» գրքում Պոդոս Պետրոս Լազարովիչը խոսում է ժամանակի Կալկաթայի երաժշտական կյանքի մասին: Հետաքրքիր է, որ նա նշում է, որ հնդկական և այլ ազգերի հարսանիքներում պարողների խումբ կար, որոնք հնդիկ կամ այլ ազգության տղամարդիկ և կանայք էին: Նրանց պարերը ուղեկցվում էին հնդկերեն և պարսկերեն երգերով և այնքան գեղեցիկ էին, որ ապշեցնում էին նաև եվրոպացիներին (էջ 38): Փաստորեն, ինչպես վկայում է գրքի նախաբանում Ստեփաննոս Ջնթումեանը, և այդ մասին խոսում է նաև Լազարովիչը, Կալկաթայի բնակչության շրջանում մեծ տարածում ունեին նաև հնդկերեն և պարսկերեն երգերը: Երկլեզու կամ եռալեզու հանրույթներում հանդիպող երևույթ էր, որ ի տարբե-

¹² Գրքույկների կիրառական նշանակությունը և արձանագրված պահանջարկը կարող են պայման դառնալ այն շրջող (*Colportage*) գրականության մեջ դիտարկելու համար: Այս գրականության մասին տե՛ս Գինգբուրգ, 2024: 31:

րություն սեփական լեզվով հնչող հոգևոր երգի, ուրախության, զվարճության երգերը հնչում էին լեզվակրի երկրորդ կամ երրորդ լեզվով: Լեզվական այս ազատությունը, փոփոխությունը թույլ էր տալիս ավելի ազատորեն արտահայտելու ուրախության զգացողությունները: Կալկաթայի հայ բնակչության համար, որի արմատները Նոր Ջուղայում էին, պարսկերեն երգերը ծննդավայրի հիշողության բաղադրիչ ունեին, որը մաս էր կազմում ինքնությանը: Ինչպես նշում է հեղինակը նախաբանում, այս երգարանում հավաքել է տարբեր ձեռագիր երգարաններից քաղված «լավագույնները», որպեսզի «սեղաններին» դրանք «վայելչորեն» հնչեն: Ստեփաննոս Ջնթումեան Աւետեանցի խոսքերով, մինչ այդ օգտագործվող օրինակները եղել են անկատար, աղճատված: Երգարանը կազմողի կողմից մշակված բանավոր մշակույթի փոխանցման դեր է կատարում:

2. «Միրակարկաջ»-ի ժողովրդական բանաստեղծությունները

2.1. *Հայերեն բանաստեղծություններ*: Երգարանի հայերեն ժողովրդական բանաստեղծությունները բովանդակային առումով բազմազան են: Դրանք ամուսնության, ուրախության («Ամուսնություն», էջ 1, «Ուրախ լերուք», էջ 2, «Զի տեսցուք քեզ», էջ 20) և ծննդի («Մանուկ քաղցրագոյն», էջ 11, «Կատարումն տարիոյ», էջ 19), սիրո, սիրեցյալի և բնության գովերգման («Հոգույս տիկին», էջ 16, «Լուր ինձ աղջիկ», էջ 23, «Լոյս աչաց կարօտիմ», էջ 25, «Գովելի ծաղկանց», էջ 25, «Միրով տոչորեալ», էջ 42), երախտագիտության, գովասանքի, փառաբանության («Եւ ձեզ ցանկամ» 2-3, «Շնորհակալութիւն», էջ 3, «Ցնծութիւն սրտիս», էջ 4, «Փառք քեզ», էջ 6, «Օրհնութիւն», «Միրելի բազմաց», էջ 9), որսի և վայելումի («Եկայք առ որս երթամք», էջ 21-22) մասին են: Առևտրի վերաբերյալ երկու բանաստեղծություն ենք տեսնում գրքում՝ «Առ գաւել» (էջ 38) և «Առ զամբիղ» (էջ 39): Առաջինում ավելը, որ վաճառում է «աղբատիկ» աղջիկը, բերել է Գերմանիայից և վաճառելուց հետո էլ պետք է կրկին վերադառնա իր երկիրը: Իսկ «զամբիղաշէն գիւղական» աղջիկը, որը վաճառում է զամբյուղ «Առ զամբիղ» բանաստեղծության մեջ, եկել է «Հայոց երկրէն», թողել է «Արարատը, Տիգրիսը, Եփրատը» և եկել է Գանգեսի ափերին զամբյուղ է վաճառում: Աղջիկը կարոտում է իր հարազատ եզերքը և երգում. «Աստ ծիրան, սերկևիլ և խաղող չկայ, Բայց միայն փափիայ, քիլայ և ատայ», և տենչում է, որ մի օր կվերադառնա և կրկին կճաշակի իր պարտեզի պտուղները: Պանդխտության երգեր ևս հավաքված են գրքույկի մեջ՝ «Կեանք պանդխտութեան» (էջ 36) և այլն: «Տէր կեցո Ջարջ արքայն» բանաստեղծությունը «ի սրտէ» ձոնվել է Մեծ Բրիտանիայի Ջորջ III կամ IV արքային: «Տաց Մարիամ» (էջ 26-27) բանաստեղծությունը կրոնականի և ժողովրդական մշակույթի միահյուսման օրինակ է: Սա Մարիամ Աստվածածնին փառաբանող մի գոտրիկ նմուշ է, որտեղ երևում է Աստվածամոր աստվածային հովանավորության ժողովրդական ընկալումը. «Նա որ պըտկիլ տա ըզտընկոց, նաև զօրէնըս անասնոց»,

կամ՝ «Նա որ անյայտ մեզ պահպանէ, Եւ քաղցն մեր լրցուցանէ» և այլն: Բանաստեղծությունն ավարտվում է աղոթքի խնդրանքով, որպեսզի չմնան առանց Տիրամոր հովանավորության. «Յադօթսնոցին կամ ձայնակից, Ջի մի՛ մնասցես թարց Մարիամ»: Երգարանում լեզվական բազմազանություն է օգտագործված միայն «Տազէ բէ տազէ» [Նորից ու նորից] վերնագրով բանաստեղծության մեջ (էջ 51-53): Պարսկերեն «Տազէ բէ տազէ նօվ բը նօվ» տողը, որը ունի «նորից ու նորից» նշանակությունը, երկու պրսկ. հոմանիշ բառերի՝ *tāza*, now «նոր» գործածությամբ, քառատողերի վերջին կրկնատողն է: Ընդ որում, ստեղծագործությունը բաղկացած է 23 քառատողից: Նման կրկնահանգով գազել է գրել նաև իրանցի բանաստեղծ Հաֆեզը, որը, ի դեպ, նույնպես զետեղված է գրքում (տե՛ս էջ 82-83):

2.2. Հայատառ պարսկերեն բանաստեղծություններ

«Միրակարկաջ» երգարանում տեղ գտած հայատառ պարսկերեն բանաստեղծությունները ժողովրդական են և հեղինակային՝ հայտնի բանաստեղծներ Հաֆեզի, Ջամիի, Ամիր Խոսրով Դեհլևիի գրչին պատկանող: Ստորև ներկայացնում ենք պարսկերեն ժողովրդական բանաստեղծությունները, որոնք, հնարավոր է, ծնվել են հայկական միջավայրում և անհայտ են իրանական բանահյուսությանը:

Պարսկերեն վերականգնված և դժվար ընթեռնելի բառերը գրված են քառակուսի փակագծերում՝ հայատառ պարսկերեն տողերում: Բնագրերի հետ ներկայացնում ենք դրանց թարգմանություններն ու բանասիրական որոշ դիտողություններ: Հայերեն թարգմանությունները բանաստեղծական չեն, փորձել ենք հնարավորինս մոտ լինել բնագրին: Պետք է նկատի ունենալ, որ դրանք բանավոր երգվող ստեղծագործություններ են եղել և շեշտադրությունն ու տոնայնությունը ևս օգտագործվել են բանաստեղծության իմաստները լսարանին հասցնելու համար, բառերը հատվել, աղճատվել են ըստ երաժշտական տոնի: Գրության մեջ կան նաև երկվություններ. միևնույն հնչյունը արտահայտվում է տարբեր տառերի միջոցով:

Գրքում գլուխը վերնագրված է «**Պարսերեն և հնդստանցերեն երգք**» (էջ 79):

Առաջին բանաստեղծությունը (էջ 79) ունի խառը բառապաշար՝ պարսկերեն, հինդի, ուրդու, որոնք, երբեմն, դժվար մեկնաբանելի են: Թարգմանությունը կատարել ենք բառափմաստների հնարավոր համեմատությունների միջոցով.

Լ. *Հըմարէ դիլբարէ սրբջան [sobhe jān]¹³ մուբարրք բաաշըդ ,*
Շադի օ էրշի դըրի խանը[khāna] մուբարրք բաաշըդ
Բըստուի մըսնըդ-է [masnad] շահանը մուբարրք բաաշըդ
Հըմարէ և այլն:

¹³ Ըստ ամենայնի, «լուսամարմին, լուսաբացի հետ համեմատվող» իմաստով, հմմտ.՝ պրսկ. *sobh* «առավոտ» և *jān* «հոգի», որը կարող է վերաբերել մարմնին և հոգուն միասին:

Թարգմ. Մի՛շտ (անվերջ) լուսամարմին սիրեցյալն օրհնյալ լինի՛,
Ուրախությունն ու սերը տանդ դռանը (երգողը) հար օրհնյալ լինի՛,
Քեզ թագվորաց¹⁴ գահը (նկատի ունի՝ Բարձր պատիվը) շնորհավո՛ր լինի՛:
Միշտ և այլն:

II. *Մուշտըրի զօրը օ ջֆայ ռահրմ բըջայ մանը բիայ,
Մուշտըրի տալէբէ շահանէ մուբարըք բաաշըդ:
Հըմարէ, և այլն:*

Թարգմ. Անհասանելի, անխիղճ յար, սիրտդ մեղմի՛ր, մոտ արի՛,
Թագվորաց գահի ձգտումդ թող հար օրհնյալ լինի՛.
Միշտ և այլն:

III. *Կիա ճըմըն չօր ճըլայ¹⁵ էար սըլամըտ բաաշըդ,
Բուլբուլ դադը նը բհուլ [պրսկ. beḥel] էար սըլամըտ բաաշըդ,
Հըմարէ, և այլն:*

Թարգմ. ///, յարն օրհնյալ լինի՛,
Սոխակ, վիշտը մի բախշիր, յարն (յարը թող) առողջ լինի՛,
Միշտ և այլն:

IV. *Հըմարէ դիլբարէ տու շադի մուբարըք բաաշըդ,
Դադ լալէ տըրէ ճըլայ աջեար¹⁶ սըլամըտ բաաշըդ
Հըմարէ, և այլն:*

Թարգմ. Քո սիրեցյալն միշտ ուրախ է, թող օրհնյալ լինի՛,
Սև սիրտ կակաչը զարմանալի փայլ ունի, առո՛ղջ լինի:
Միշտ և այլն:

V. *Բուլբուլ գուլսէութայ [sotūda] նալը օ ֆարիադ կեաշ,
Բադը տու չօր ճըլայ էար սըլամըտ բաաշըդ,
Հըմարէ, և այլն:*

Թարգմ. Վարդ գովերգող սոխակը լացուկոծ անող,
Քո այգին շքեղափայլ է, յա՛ր, առո՛ղջ եղիր:
Միշտ և այլն:

*** Էջ 80

I. *Նարընջի աջէբ ռանկի ճէրայ զարդէ շօդի, գուլէ նարընջի,
Տու դիլ բը քըսի դադի ու իա դըլբ շօդի, գուլէ նարընջի
Զալմ ճէրայ միրընջի էյ գուլէ նարընջի, շաբաշ ճէրայ միրընջի:*

Թարգմ. Նարնջին (նարնջագույնը) զարմանահրաշ գույն է, ինչո՞ւ ես դեղ-
նել նարնջածաղի՛կ,

¹⁴ Ըստ ամենայնի, փեսայի իմաստով:

¹⁵ Այս հատվածը, ըստ ամենայնի, գրված է ուրդույով:

¹⁶ Չնարավոր է պրսկ. 'ajab բառն է՝ «զարմանալի» նշանակությամբ:

Դու սիրտդ տվել ես մեկին ու անսիրտ մնացել, ո՛վ նարնջածաղիկ,
Անսի՛րտ, ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես
տանջում:

*II. Սըդ սալ սըֆըր գէշտըմ օ աշըխ նայ շուղըմ, գուլէ նարընջի,
Եք խալը թօրայ դիդէմ ուօ դիվանայ շուղըմ, գուլէ նարընջի.*

Ջալմ, և այլն:

Թարգմ. Հարյուր տարի ճամփորդեցի և չսիրահարվեցի, նարնջածաղի՛կ,
Քո մի խալը տեսա և խելագարվեցի (խենթացա), նարնջածաղի՛կ,
Ճարպի՛կ ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես
տանջում:

Անսի՛րտ, ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես
տանջում:

*III. Չէշմանէ սիայ դարի ուօ սուրմայ չի քունի, գուլէ նարընջի,
Սըդ էարօ դիգէր դարի ու մարայ չի քունի, գուլէ նարընջի,*

Ջալմ, և այլն:

Թարգմ. Սև աչքեր ունես և (էլ) ծարիրն ի՞նչ ես անում, նարնջածաղի՛կ,
Հարյուր այլ յար ունես և ես քո ինչի՞ն եմ պետք, նարնջածաղի՛կ,
Անսի՛րտ, ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես
տանջում:

*IV. Չէշմանէ սիայ դարի ուօ սուրմայ մի խահէմ, գուլէ նարընջի
Սըդ էար է դիգէր դարէմ ուօ թորայ մի խահէմ, գուլէ նարընջի*

Ջալմ, և այլն:

Թարգմ. Սև աչքեր ունես և ծարիր ես ուզում, նարնջածաղի՛կ,
Հարյուր այլ սիրեցյալ ունեմ և (բայց հենց) քեզ եմ ուզում, նարնջածաղի՛կ,
Անսի՛րտ, ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես
տանջում:

*V. Ուստադ մարայ գուֆտը բիայ թօրայ բըքուն, գուլէ նարընջի,
Սըն թօրայ քունըմ դիլ նը քունըդ մընչէ քունըմ, գուլէ նարընջի,*

Ջալմ, և այլն:

Թարգմ. Վարպետն ինձ ասաց՝ արի՛, ապաշխարի, նարնջածաղի՛կ,
Ես (թե) ապաշխարեմ, սիրտը (ս) չի ապաշխարում, ես ինչ անեմ, նարնջա-
ծաղի՛կ,
Անսի՛րտ, ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես
տանջում:

*VI. Եք սինէ դօ խըրբուգէ ուօ դիլ տընգ մըքուն, գուլէ նարընջի,
Սըն մընդէ մօսաֆէրամ ուօ դիվանայ մըքուն, գուլէ նարընջի,*

Ջալմ և այլն:

Թարգմ. Մեկ կրծքավանդակ ու հանց սեխ զույգ պտկունք, ինձ մի՛ վշտացրու, նարնջածաղի՛կ,
Ես հոգնած ճանապարհորդ եմ, մի՛ խենթացրու, նարնջածաղի՛կ,
Անսի՛րտ, ինչո՞ւ ես տանջում, է՛յ նարնջածաղիկ, ուրախ եղի՛ր, ինչո՞ւ ես տանջում:

*** Էջ 81

*Այե պըրի, ճէհրա բըեկ նազ դիլըմ բորդըի,
Բվըշ օրազ ք բգու տազա չէ ամօխտէի:
Մըն քուջա, հէջրէ քուջայ էյ ֆըլըկէ նա էնսաֆ,
Մըր հմէ դաղը բիսօզըմ կէմըրա սօխտէի,
Այե պըրի, և այլն:*

Թարգմ. Ո՛վ սիրուն փերի, ինչո՞ւ մեկ նազով սիրտս տարար,
Ձևն ու գաղտնիքն ասա, նոր ի՞նչ ես սովորել:
Ես ուր, ամուսնական խուցն ուր, է՛յ անխիղճ ճակատագիր,
Ես համակ այրվում եմ, քանզի դու ինձ այրել ես:
Ո՛վ սիրուն փերի, և այլն:

*** Էջ 81

*Բազ հվայէ ճըմնըմ արգուստ¹⁷,
Ջըլվըրէ սըրվ է[օ] սըմնըմ արգուստ:
Ըզ դօրէ գնդան սօ էյի նըզանին,
Հըմճու ըզիզէ իէ մընըմ արգուստ:
Նօզհըտ¹⁸ ք գօլրա չէ կօնըմ էյ նսիմ,
Բուիէ ըզան պիրահընըմ արգուստ:
Շիշէ շրաբ ըստ օ շըբէ մահըտաբ,
Դըր բըղըլըմ դօլ բդընըմ արգուստ:
Տօբայ զը մէյ կրդամ օ ամըդ բըհար,
Սաղիէ տօբայ շըկընըմ արգուստ:
Թարգմ. Կրկին դաշտ ու մարգագետնիս օդն եմ երագում,
Այն լուսաշող եզերքն եմ երագում,
Իմ գնդանի դռնից, նազանի՛,
Այնքա՛ն սիրելի ես, քեզ եմ երագում:
Ծաղկի անուշահոտությունը ինչ անեմ, ո՛վ զեփյուռ,
Նրա շապիկի բույրն եմ երագում:
Գինու շիշն է ու լուսնկա գիշերը,
Գրկիս մեջ մարմնի գալար եմ երագում:*

¹⁷ Այս բանաստեղծությունը պատկանում է իրանցի հեղինակ Ջամիի գրչին (*Բանաստեղծությունների ժողովածու*, գազել հմբ. 188), սակայն կան որոշ աղավաղումներ, և տողեր են ավելացված, այդ պատճառով բերում ենք «Միրակարկաջ»-ի տարբերակը և մեր թարգմանությունը:

¹⁸ Հմմտ. պրսկ. *nakhat* «անուշահոտություն»:

Գինուց հրաժարվեցի, և եկավ զարուն,
Մեղքս կոտրող մատրվակին եմ երագում:

*** էջ 82

I. *Էյի գոլ բիա տու նազ մըկուն, ին նազ օ դըմզըհա,
Մըկուն, տաղըտ է նազըտ նըդարըն էյ յարա,
Շըբրա հըմը դւրազ մըկուն,
Ղուրբան ք զօլֆըտ շ[ս]է ճին ըստմ սըբզ դըրին,
Արըխճին ըստ, չէ խօշ դարի լըբ շիրնէ,
Էյի գոլ բիա, և այլն:*

Թարգմ. Էյ, ծաղիկ, արի՛, դու նազ (էլ) մի՛ արա, այդ նազերդ ու քմայքդ,
Էլ մի արա, նազանքիդ չեմ դիմանում, է՛յ սիրելի,
Մի՛ ձգիր անվերջ գիշերը այս,
Մատաղ եմ խոպոպածալքիդ, կանաչը դրանց մեջ,
Հանց արաղչին¹⁹, ինչ լավն է քաղցր շրթունքդ,
Է՛յ, ծաղիկ, արի՛, և այլն:

II. *Բիա բըռըվըմ խանէ էմըն, երբ շըբ դու շըբ,
Մէհէմանէ մըն, եք բօսը դէ կուրբամ է տու,
Էյի գոլ բիա, և այլն:*

Թարգմ. Արի՛ զնանք իմ տուն, մի գիշեր, երկու գիշեր,
Իմ հյուրն [եղիր], ինձ մի համբույր տուր, քեզ մատաղ,
Ո՛վ ծաղիկ, արի՛, և այլն:

*** էջ 99

*Ջըզ բը էէշդ ք բըլա էստ կէ մըն միդանըմ,
Մընգէ աինընումա էստ կէ մըն միդանըմ,
Խունըմ ախըր բըկըֆէ պայ է կըսէ խահի թէզ,
Ին հըմը ոընգը հէնա էստ կէ մըն միդանըմ:
Ջիզըրամ դադ բդադ ըզ սըբըբ է տնհայեստ,
Պհլուըմ բաշ դվայեստ կէ մըն միդանըմ:*

Թարգմ. Սիրուց բացի, այլ դժբախտություն կա, որ ես գիտեմ,
Գաղտնացույց մի քար կա, որ ես գիտեմ,
Արյունս ի վերջո թե որևէ մեկի ոտքի տակ լցնես,
Այդ ամենը հինայի գույն է, որ ես գիտեմ:
Հոգիս այրվում է միայնության պատճառով,
Կողքիս եղի՛ր, ճարը դա է, որ ես գիտեմ:

¹⁹ Պրսկ. ‘araqchīn «թասակի տեսակ է, որը դրվում է հիմնական գլխարկի կամ փաթեթի տակից»: Պարսից բանաստեղծության մեջ ունի զավաթ նշանակությունը նմանության պատճառով:

*** Էջ 101

Իմ բոզ դիզերըմ բը ֆրադէ տու շամ շօդ ,
 Դըր արգուէ վսլը տու, ումըմ տըմամ շօդ
 Ամըդ նըմազը շամ օ նըամըդ նիզարը մըն
 Էյի դիդը պասըդասար, կէ խաբըմ հրամը շօդ:
 Բըստըմ բը շօխը²⁰ էար կէ բինըմ ջըմալը դօստ,
 Ի նըմ նըշօդ մօեսսըթ²¹ սըօդա կէ խամը շօդ:
 Դըր էյն ը մա գուզըր կունի էյի սիսինը լըբան,
 Ճըշմանէ տօ բըսիք ը մա, դըրէ ջըհան կունա:
 Մըհմուդ դգնըվի կէ հզարան դուլամ է դաշտ,
 Էշխըշ չունան գէրըֆտ ը դուլամէ դուլամը շօդ:
 Խալէ տու դանէդան ը զօլֆէ տու դամէդամ,
 Մուրդի չու դանէ դիդօ գէրֆտար ը դամը շօդ:

Թարգմ. Այս օրս ևս քո բաժանմամբ այլևս երեկո դարձավ,
 Քեզ հետ միանալու ցանկությամբ կյանքս մաշեցի:
 Եկավ իրիկվա նամազի (աղոթքի) ժամը, բայց չեկավ իմ գեղեցկուհին,
 Է՛յ աչք հսկիր, քանզի քուն-երագս խաթարվեց,
 Փակեցի սիրեցյալիս ցնորքով, որ տեսնեմ գեղեցիկ ընկեր-յարիս:
 Դա էլ չեղավ ուղի, սերը անհաս մնաց:
 Մեր հայացքի առջևն ես ճեմում, ո՛վ սուսանաշուրթ,
 Քո աչքերը ուղին են մեր ու դուռն աշխարհի ///,
 Մահմուդ Ղազնավին, որ հազար ստրուկ ուներ,
 Երբ սիրահարվեց, ստրուկի ստրուկ դարձավ:
 Քո խալը հատիկ է, քո խոպոպներդ սիրո դարան,
 Հավքը հենց հատիկը տեսավ, սիրո դարանում հայտնվեց:

*** Էջ 111

I. Մադիայ ֆսլը բահար ըստ տօ մօբարըկ բաշըդ
 Բադը պէշ ար քար-է տօ մօբարըկ բաշըդ
 Մադիայ, և այլն.

Թարգմ. Օ՛ մատովակ, գարուն է, աչքդ լույս լինի՛,
 Գինին մոտեցրու, գործդ թող օրհնյալ լինի՛ ,
 Օ՛ մատովակ, և այլն:

II. Շիշէ պէյմանը բը լըբ գիր օ սօրահի բը կնար,
 Տաբը մէի, բօսա կընար-է տօ մօբարըկ բաշըդ,
 Մադիայ, և այլն:

Թարգմ. Ապակե գավաթը շուրթիդ մոտեցրու և սափորը մի կողմ դիր,
 Գինու (սիրո) հրայրքն ու համբույրը քեզ օրհնյալ լինի՛ :
 Օ՛ մատովակ, և այլն:

²⁰ Հմմտ. պրսկ. shouq «իղձ, փափագ, տենչանք»:

²¹ Հնարավոր է պրսկ. masir «ընթացք, ծիր, ուղեծիր» բառն է:

Եզրակացություն

«Միրակարկաջ» երգարանը հայերեն, հայատառ պարսկերեն, հնդկերեն երգերի ժողովածու է, որի կազմողը հնդկահայ հայտնի մտավորական տոհմի ներկայացուցիչ Ստեփաննոս Ջնթումեանն է: Ստեփաննոսը փորձել է ժամանակի հայտնի երգերը, որոնք հայերը երգել են խնջույքների ժամանակ, ի մի բերել, «փայլեցնել» և տպագրել: Ըստ կազմողի, «լուսավորության» ձգտող ազգի նույնիսկ խնջույքի և ուրախության երգերը պետք է «վայելույշ» լինեն: Թեև դժվար է որոշարկել Ստեփաննոսի միջամտության աստիճանը բանավոր ժողովրդական նյութին այն գրավորի փոխարկելու գործընթացում, սակայն սկնհայտ է, որ շատ հեղինակային ստեղծագործություններ են հայտնվել գրքում, և դա ցուցիչ է, որ կազմողը հարկ է համարել հասարակ ժողովրդի շրջանում տարածել գրական բարձր արժեք ունեցող ստեղծագործությունները: Կարող ենք արձանագրել, որ գրավորի անցած այս նյութը մեծամասամբ չի արտացոլում ժողովրդի մեջ տարածված և բանավոր փոխանցվող բանահյուսական նյութը՝ չնայած այն հանգամանքին, որ Ստեփաննոսի առաջին գործն էր, և նա գրականության գիտակ չէր:

Երգարանում հավաքված պարսկերեն, հնդկերեն բանաստեղծությունները տպագրված են հայերեն այբուբենով, ինչը շրջանառվող բանավոր օտարալեզու նյութին «հայկականություն» հաղորդելու և այն հայկական միջավայրում օգտագործելու օրինականացման «պիտակ» էր տալիս: Պարսկերեն և հնդկերեն ոչ հեղինակային, բանահյուսական գրական նյութը ստեղծվել է հայկական միջավայրում, և կարևորվում է այդ գրականություններ ներմուծելու տեսակետից:

Երգարանը աշխարհիկ ստեղծագործություն է, որը լավ սպառվող գրքերից է եղել, ինչը խոսում է նաև Կալկաթայի հայ ընթերցողի շրջանում աշխարհիկ գրականության նկատմամբ հետաքրքրության և ժամանակի հրատարակչական ուղղությունների փոփոխման մասին:

АСМИК КИРАКОСЯН – Переход от устной культуры к письменной на страницах «Сиракаркаджа». – В статье рассматривается песенник «Сиракаркадж», напечатанный в Калькутте в 1830 году, в рамках перехода от устной культуры к письменной. Составитель объединил армянские, персидские и индийские (написанные армянским алфавитом) народные песни в одном сборнике для армянской аудитории, что отражает культурное многообразие, существовавшее в Калькутте того времени.

Отмечая роль составителя как посредника в процессе трансформации устного народного творчества в письменную форму, в статье поднимается вопрос о степени его вмешательства в содержание собранных произведений. Несмотря на то, что песенник основывается на народных корнях, он представляет собой переработанный литературный материал, предлагаемый тому же народу, от которого он происходит, и рассматривается в контексте его дальнейшего распространения.

«Сиракаркадж» является образцом светской литературы, и в статье он анализируется в свете изменений направлений и подходов к книгоизданию того времени.

Ключевые слова: «Сиракаркадж», Калькутта, песенник, фольклорный материал, духовная песня, армянский, персидский, хинди.

HASMIK KIRAKOSYAN – *The Transition from Oral Folk Culture to Written Form in the Pages of “Sirakarkaj”*. – The article discusses the “Sirakarkaj” songbook, published in Calcutta in 1830, within the context of the transition from oral folk to written culture. The compiler of the book brought together Armenian, Persian and Indian folk songs (in Armenian script), in one songbook aimed at an Armenian audience, which also reflects the cultural diversity present in Calcutta at the time. By emphasizing the mediator role of the compiler in transforming oral folk culture into written form, the article raises the question of the extent of the compiler's intervention in the folk works collected in the songbook.

Although the verses in the songbook had folk origins, it is a literary material processed by the compiler and presented to the very people who created it, and it is discussed in the context of this circulation.

“Sirakarkaj” is an example of secular literature, and in the article, it is analyzed in the context of changes in the printing directions and approaches of the time.

Key words: “Sirakarkaj”, Calcutta, songbook, folklore material, spiritual song, Armenian, Persian, Hindi.

Գրականության ցանկ

Ավետուհեանց Թ. Խ. (1846), Արամայիս, Կալկաթա: Տպ. Արարատեան ընկերության:

Գինգբուրգ Բ. (2024), Պանիրն ու որդերը. ԺՋ դարու ջաղացականի մը տիեզերք, իտալերենից թարգմ. Մինաս Լուռեան, Երևան: Անտարես:

Դավթյան Հ. (1967), Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Մատենագիտություն, խմբ. Հ. Ս. Անասյան, Երևան:

Երեմյան Ա. (1965), «Հնդկահայ մշակույթը եւ ԺԹ. դարի մի անյայտ ձեռագիր տաղարան (17-20-րդ դար)», Բազմավեպ, թիւ 8-10, էջ 215-224:

Թեղդիկ (1912), Տիպ ու տառ, Կ. Պօլիս: Վահրամայ եւ Հրաչեի Տէր-Ներսէսեան:

Իրազէկ Յ. (Յակոբ Տէր Յակոբեան) (1986), Պատմություն հնդկահայ տպագրութեան, խմբ.Վազգէն Ղուկասեանի, Անթիլիաս: Հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

Լազարովիչ Պ. Պ. (1832), Ստորագրություն Կալկաթայ քաղաքի, Վենետիկ: Տպ. Ս. Ղազարի:

Կիրակոսյան Հ. (2021), «Ազդարար»-ում տպագրված հայատառ պարսկերեն մի գրության մասին», Բանբեր Մատենադարանի, 32, էջ 198-211:

Նանուկյան Ռ. Պ. (1989), «1810-20-ական թվականների հնդկահայ գրական շարժման պատմությունից», ԼՀԳ, 5 (557), էջ 27-36:

«Միրակարկաջ» (1830), Կազմեց Ս. Ջնթումեան, Կալկաթա:

Aslanian, Sebouh David. (2023). Early Modernity & Mobility, Port Cities and Printers across the Armenian Diaspora, 1512 - 1800, Yale University Press: New Haven & London.

Seth, Jacob Mesrobian. (1992). Armenians in India. From the earliest times to the present day. A work of original research, Asian Educational Services, New Delhi: Madras.